

**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԿՐՈՐԴ
ՍԵՐՆԴԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(1950-1980ԹԹ.)**

ՖԻՐՈՒՋԻՄՈՂԱԴԱՄ ՄԱՀՄՈՒԴ՝ (ԻՐԱՆ)

Հոդվածը նվիրված է մանկական գրականության ուսումնասիրությանը Իրանի սահմանադրական շրջանից հետո: Ուսումնասիրության առարկա է դարձել մասնավորապես սահմանադրությանը հաջորդող երկրորդ սերնդի մանկական գրականությունը, որն ընդգրկում է 1950-1980-ական թվականները:

Բանալի բառեր – Իրան, մանկական գրականություն, 1950-1980-ական թվականներ:

Իրանում քսաներորդ դարի երկրորդ կեսի սկզբին ի հայտ եկան սահմանադրությանը հաջորդող շրջանի երկրորդ սերնդի գրողները: Այդ ժամանակաշրջանն ընդգրկում է 1950-1980 թթ.: Այդ ժամանակ առնչվում ենք մանկապատանեկան գրականության ասպարեզում լուրջ շարժման հետ: Թեպետ սկզբում տեղի ունեցավ «մորդադի 28-ի» (19 օգոստոսի) հեղաշրջումը, սակայն ընդհանուր առմամբ այդ ժամանակ Իրանը մասամբ քաղաքական ու սոցիալական կայունություն էր ձեռք բերել, և երեխաներին ու դեռահասներին ուշադրություն դարձնելը ներկայացվում էր որպես կառավարության լուրջ ծրագրերից մեկը: Այդ ժամանակ հիմնադրվեց «Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոնը»², և մանկապատանեկան գրականությանն անկախ ինքնություն տրվեց: Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոնը հիմնադրվեց՝ սոցիալական, մշակութային ու արվեստի զարգացումներից ու պահանջներից ելնելով և իրանցի մանուկների ու դեռահասների գրականությունը, արվեստն ու մշակութային արտադրանքը կազմակերպելու նպատակով: Այս ժամանակաշրջանում ի հայտ եկան այնպիսի գրողներ, գեղանկարիչներ ու արվեստագետներ, ովքեր մասնավորապես նվիրվեցին մանկա-

¹ Իրան, Թերբաթե Հեյդարիյեհ, Իսլամական Ազադ համալսարանի Թերբաթե Հեյդարիյեհ մասնաճյուղ, պարսից լեզվի և գրականության բաժին (ամբիոն):

² **Թուրան Մ.**, Մանկական գրականության դանդաղ ընթացքը, Մանկան գրքի խորհուրդը, Թեհրան, 1978, էջ 25, 27:

պատանեկան գրականությանը: Ձևավորվեցին հատուկ մանուկների համար նախատեսված ամսագրեր, բազմաթիվ պետական ու մասնավոր հիմնարկներ ծրագրեր մշակեցին մանկապատանեկան ոլորտի աշխատանքների համար: Պարսկական չափածոյի ու արձակի վերաբերյալ փոփոխություններ տեղի ունեցան, պարսկական բանաստեղծության մեջ նոր կաղապարներ ստեղծվեցին, և պատմվածքի ժանրը նոր ուղի որդեգրեց:

Մանկական գրականության երկրորդ սերնդում կարելի է հանդիպել այնպիսի կերպարների, ովքեր հասակ առան առաջին սերնդի մշակութային ու գրական միջավայրում և նույնիսկ դասեր սերտեցին ու ընդօրինակեցին այդ շրջանի գրողներից, սակայն վերջում նոր ուղի բացահայտեցին և նպաստեցին տարբեր կաղապարով ու ձևաչափով մանկապատանեկան գրականության ձևավորմանը:

Մանկավարժ, սոցիալական քննադատ, թարգմանիչ, պատմվածքների հեղինակ և ատրպատական ֆուլկլորի բնագավառի հետազոտող Սամադ Բեհրանգին (1938-1968) համարվում է մանկական գրողներից, և նրա «Սև ձկնիկը» գիրքը երկար ժամանակ «Իրանի ժողովրդական ֆիդայի պարտիզանների կազմակերպության» ոչ պաշտոնական հռչակագրի դերն էր խաղում: Սամադի ստեղծագործությունների ու խոհերի արդյունավետ կյանքը շատ ավելի ձգվեց, քան նրա կարճատև կյանքը: Նրա պատմվածքները, որոնց զովագրով էր երբեմն զբաղվում Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոնը, երիտասարդ սերնդի մեջ, տարածեցին եսամոլությունից հեռու ինչ-որ հերոսականություն³:

1952 թ. «մորդադի 28-ի» (օգոստոսի 19-ի) հեղաշրջման հետևանքով, քաղաքական զարգացումներին զուգահեռ, ուշագրավ են պարսից լեզվում մանկապատանեկան գրականության մեջ տեղի ունեցած երեք կարևոր իրադարձություններ:

Առաջինն Ազադ Ռահնամայի կողմից Իրանի մանկավարժական բարձրագույն դպրոցում «Սեփիդեյե ֆարդա» (վաղվա արշալույսը) ամսագրի հիմնադրումն էր, որի շրջանակներում Բաղեր Հուշարի հետ համագործակցության արդյունքում հող նախապատրաստվեց՝ համալսարանական ու ակադեմիական հետազոտություններում մանկական գրականության տեսական խնդիրներն արծարծելու համար: Բաղեր Հուշարը պարզ ու քաղցրահունչ

³ Azimi F., Quest for democracy in Iran C: a century of struggle against authoritarian rule, USA, 2008, p. 318.

արձակով ավելի քան հիսուն կարճ աշխատանքներ ունի 7-12 տարեկան երեխաների համար և նախադրյալներ ստեղծեց մանկավարժական բարձրագույն դպրոցում «մանկական գրականություն» առարկայի դասավանդման համար: Նույն այդ քայլերի արդյունքում Թուրան Միրհադին՝ որպես մոդեռնիզմի համակրող անձնավորություն, արժեքավոր աշխատանքներ կատարեց երեխաների ու դեռահասների համար ազատ ու գիտակից կրթության ուղղությամբ և մեծապես նպաստեց Իրանում մանկական գրականության նպատակներն առաջ մղելու գործին:

Երկրորդը «Ֆրենկլինի» անվան կազմակերպության գործունեությունն էր պարսկալեզու երեխաների ու դեռահասների համար արևմտյան գրողների գրական ստեղծագործությունների թարգմանության կապակցությամբ, որի շրջանակներում, համագործակցելով «Ամիր Քաբիր» հրատարակչության հետ, բազմաթիվ ստեղծագործություններ թարգմանվեցին պարսկերեն, այդ թվում՝ Հանս Քրիստիան Անդերսենի պատմվածքները, որի արդյունքում թարգմանվեցին ավելի մեծ թվով աշխատանքներ, օրինակ՝ «Գուլիվերի ճանապարհորդությունները», «Ռոբինզոն Կրուզոն», «Հեքլբերի ֆինի արկածները» և այլն, այսպիսով, հող նախապատրաստելով պարսկերենով բազմաթիվ պատմվածքների ստեղծման համար⁴:

Եվ երրորդը մանուկների համար հին պարսկական ստեղծագործությունների վերաշարադրումն էր, որը հանգեցրեց մանուկների համար հատուկ լեզվական առանձնահատկությունների ստեղծմանն այդ լսարանի գրական աշխատություններում: Էսան Յարշաթերը գրի է առել «Հնադարյան Իրանի պատմվածքները» և «Շահնամեի պատմվածքների ընտրանին», իսկ Զահրա

⁴ Իհարկե, թարգմանչական աշխատանքներն սկսվել էին դեռևս նախքան այս ժամանակաշրջանը, սակայն երեխաների համար թարգմանություններին սկիզբ դրվեց այս շրջանում: Առաջին աշխատությունները, որոնք պարսկերեն թարգմանվեցին, Տոլստոյի «Սիրեք միմյանց» և «Նախանձի վերջը մահն է» աշխատություններն էին: Այդ երկու ստեղծագործություններն էլ Աբդոլառահիմ Խալիլային 1909 և 1910 թթ. թուրքերենից թարգմանել է պարսկերեն: Պուլկինի առաջին պատմվածքները տպագրվեցին «Առասպել» ժողովածուներում, «Տանձ տատիկը» Սոլթան Շարաֆեդին Ղահրամանիի և «Մեկ փամփուշտը» Միրզա Հոսեյնխան Անսարիի թարգմանությամբ, երկու աշխատանքներն էլ տպագրվել են 1929 թ., իսկ «Կապիտանի աղջիկը» Փարվիզ Նաթել Խանկարիի թարգմանությամբ՝ 1930 թ.: Չեխովին առաջին անգամ իրանցիներին ներկայացրեց Սադեղ Հեդայաթը: Ռուս գրականության հայր Մաքսիմ Գորկուց Իրանում տպագրված առաջին պատմվածքը «Ժամն» էր, որը Յուսեֆ Էթեսամիի թարգմանությամբ հրատարակվեց 1910 թ. «Բահար» ամսագրում:

Խանլարին վերաշարադրեց «Պարսկերեն հրապուրիչ պատմվածքները»: Այստեղ ավելի շատ փայլեց Մեհդի Ազառյազդիի աստղը, և նրա «Լավ պատմվածքներ՝ լավ երեխաների համար» ստեղծագործությունը հանրության ընդունելությանն արժանացավ:

Մեհդի Ազառյազդին ծնվել է 1922 թ. մարտի 18-ին Յազդ քաղաքում: Գրախանութում աշխատելով՝ նա ծանոթացավ բանաստեղծության ու գրականության ոլորտի նշանավոր դեմքերի հետ և կարճ ժամանակ անց տեղափոխվեց Թեհրան և իր համաքաղաքացի Հոսեյն Մաքիի միջնորդությամբ սկսեց աշխատել Նասեր Խոսրո փողոցում գտնվող «Հաջ Մոհամմադալի Էլմիի» անվան տպարանում: 1957 թ. տպագրվեց նրա «Լավ պատմվածքներ՝ լավ երեխաների համար» վերտառությամբ ութհատորյակի առաջին հատորը: Այդ գրքի համար նա արժանացավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մրցանակի: Նրա գրչին է պատկանում նաև «Նոր պատմվածքներ՝ հին գրքերից» ժողովածուն: Այս երկու ժողովածուներն արժանացան Փահլավի հիմնադրամի «Տարվա գիրքը» թագավորական մրցանակին: Մեր կարծիքով այս աշխատանքներին բնորոշ պարզ ու սահուն արձակը և ժողովրդի սոցիալական ու բարոյական մոտեցումների վրա հիմնված հասկացություններն այդ գրքերին հաջողություն բերեցին: Ազառյազդին իր մահկանացուն կնքեց 2009 թ. հուլիսի 9-ին, և նրա մահվան օրն Իրանում հայտարարվել է «Մանկական գրականության օր»:

Սահմանադրությանը հաջորդող հինգերորդ տասնամյակը, այսինքն՝ 1960-ականները, առանձնահատուկ նշանակություն ունի Իրանի հասարակության սոցիալական կյանքում: Այս ժամանակահատվածում մեծ թափ առավ քաղաքային կյանքը, և նկատելիորեն զարգացավ հասարակության միջին խավը: Կրթական համակարգում և դասագրքերում հիմնական փոփոխություններ կատարվեցին: Տպագրվեցին տարրականի դպրոցականների համար «Դպրոցականի պարբերականը» ժողովածուներ: Այդ պարզ ու մանկական ժողովածուները տպագրվում էին «Ֆրենկլինի» և ուսումնադաստիարակչական մարմնի կողմից, և այդ ուղղությամբ համագործակցում էին անվանի դեմքեր Փարվին Դոլաթաբադին և Մահմուդ Քիանուշը:

Մահմուդ Քիանուշը ծնվել է 1934 թ. Մաշհադ քաղաքում: Դեռևս պատանի հասակից սկսել է գրել բանաստեղծություններ ու պատմվածքներ և նույնիսկ փորձել է թարգմանություններ անել: Նրա աշխատանքներից են կարճ պատմվածքների երեք ժողովածուներ՝ «Այնտեղ մեկը չկար», «Եվ աղետն եկավ, և ապաքինում եկավ» և «Ողորկ ու փոս գավաթում», մեկ երկար պատմվածք՝ «Զբաղված մարդը», ինչպես նաև վեպեր՝ «Խոսք ու լռություն»,

«Ձյուն ու արյուն», «Ջրասույզն ու ծուկը», և մեկ փրիստփայական վեպ՝ «Ոգու հորիզոններում»: Ինչպես նաև թարգմանել է Ջան Շտեյն Բեկից /John Ernst Steinbeck, Jr/ «Անծանոթ Աստծուն» /To a God Unknown/, Դ.Հ. Լորուենսից /David Herbert Lawrence/ «Փախուստի դիմած կինը», Սամուել Բեքեթի /Samuel Barclay Beckett/ «Մալոնը մահանում է» /Malone Dies/ և Օժեն Օնեյլից /Eugene Gladstone O'Neill/ «Յերեկի շրջագայությունը գիշերում» /Long Day's Journey into Night/ ստեղծագործությունները: Նա նաև աշխատանքներ է տարել գրական քննադատության ուղղությամբ, սակայն այդուհանդերձ մանկապատանեկան գրականության հետազոտողներից շատերն Իրանում Մահմուդ Քիանուշին ներկայացնում են որպես «Իրանում մանկական բանաստեղծության հայր»: Քիանուշի համբավը մանկական բանաստեղծության բնագավառում ավելի շատ ստացվել է դպրոցական պարբերականներում նրա գործունեության շնորհիվ: «Փեյք» («Սուրհանդակ») ամսագրերը, որոնք տպագրվում էին 1960-1970 թթ. ուսումնական հրատարակչության գրասենյակի կողմից դպրոցականների, մանկավարժների ու ընտանիքների համար, և այսօրվա «Ռոշդ» («Ջարգացում») ամսագրերը դրանց շարունակությունն են՝ ավելի քան մեկ միլիոն ու յոթ հարյուր հազար տպաքանակով, և երկու շաբաթը մեկ բաժանվում էին դպրոցներում: Իրականում այդ ժամանակաշրջանում բազմաթիվ դպրոցականներ իրենց դասագրքերից ավելի կարդում էին պարբերականները: Բանաստեղծություններ, որոնցից շատերը Մահմուդ Քիանուշի ստեղծագործություններն էին:

Մահմուդ Քիանուշը միգրացեալ ակամայից մանկապատանեկան բանաստեղծությունը հիմնովին հեղաշրջեց: Քիանուշի գրառումների ուսումնասիրությունից կարելի է հասկանալ, որ նա գտնում է, որ չպետք է մանկական բանաստեղծությունը գրել մանկան կամ մանկական լեզվով, այլ մանուկների համար ստեղծագործող բանաստեղծը պետք է սիրի երեխաներին և գիտակցի, որ վերադառնալով իր մանկության շրջան՝ չի կարող կապ հաստատել մանուկների և մանկական աշխարհի հետ: Քիանուշը, ուշադրություն դարձնելով բովանդակությանը, միաժամանակ մեծապես կարևորում է նաև մանկան բանաստեղծության տեխնիկան ու երաժշտությունը: Քանի որ գտնում է, որ երեխաների համար խաղից կարևոր բան չկա, և խաղին անհրաժեշտ է ակտիվ ու շարժումներով հագեցած երաժշտություն: Արդյունքում հանգն ու ներդաշնակ վերջավորությունները, որոնք ինքնին երկու տեսակի երաժշտություն են, անհրաժեշտ են մանկական բանաստեղծության համար:

Իրանում մանկական գրականության երկրորդ սերնդի գրողների շարքում հանդիպում ենք այնպիսի հեղինակների, ովքեր թեպետ չեն ներկայացել որպես բանաստեղծ կամ պատմվածքների հեղինակ, սակայն առանց նրանց ներկայության հնարավոր չէին դառնա մանկապատանեկան գրականության ծաղի բեղմնավորումն ու բերքատվությունն այսօրվա տեսքով: Թուրան Միրհադին այնպիսի կերպար է, ում շնորհիվ կատարելագործվեցին Իրանում մանկապատանեկան ժամանակակից գրականության հիմքերը:

Թուրան Միրհադին Ֆրանսիայում գտնվելու ժամանակ բացահայտեց մանկական գրականության գիտական ու սոցիալական կողմերը: Այդ երկրում և կրթական համակարգի շրջանակներում նա բացահայտեց երեխաների սոցիալական ու մշակութային զարգացման գործում մանկական գրականության ու արվեստի անզուգական դերը, և դրանից հետո, երբ վերադարձավ Իրան, այդ վաստակած փորձառությունը զրույցների տեսքով կիսեց իր պատանեկան շրջանի ընկերոջ՝ Լեյլա Իմենի հետ: Ապա սկսած 1952 թվականից՝ այդ երկուսը հայտնվեցին Ազադ Ռահնամայի կողքին, ով հրատարակում էր «Սեփիդեյե Ֆարդա» ամսագիրը: Նրանց աշխատանքի արդյունքը 1955 թ. Թեհրանի համալսարանի գեղարվեստի ֆակուլտետում կազմակերպված մանկական գրքերի առաջին ցուցահանդեսն էր: Այդ ցուցահանդեսը կարևորվում է նրանով, որ այն ժամանակաշրջանի մշակութային հասարակությանը հիշեցրեց մանկական գրքերի ու գրադարանների պակասի մասին: Դրանից հետո էր, որ մանկական գրականության տարածման գծով շարժման սկիզբը դրվեց, որը ոչ պաշտոնական ու ոչ կենտրոնացված տարբերակով շարունակվեց մինչև 1961 թ. «Մանկան գրքի խորհրդի» հիմնադրումը⁵:

Իրանում մանկան գրքի խորհրդի ձևավորումը նշանակում է երկրում մանկական գրականության ինստիտուտի պաշտոնականացում: Այդ ինստիտուտի հիմնադրումից ի վեր, այսինքն՝ ավելի քան կես դար, Թուրան Միրհադին մեծ դեր է ունեցել Իրանի մանկական գրականության ուղղորդման ու առաջնորդման հարցում ազգային ու միջազգային ասպարեզներում: Գերմաներեն, ֆրանսերեն ու անգլերեն լեզուներին տիրապետելու հանգամանքը նրան վեր հանեց ազգային սահմաններից, և նա ներկայացավ որպես առանց սահմանների կերպար: Թուրան Միրհադին 1960 և 1970-ականներին մաս-

⁵ Մոհամմադի Մ., Ղաիմի Ջ., Իրանի մանկական գրականության պատմություն, հատոր Ե, «Զիստա» հրատ., Թեհրան, 2002, էջ 213-217:

նակցել է մանկական գրականության միջազգային համաժողովներին և որպես «Հանս Քրիստիան Անդերսենի» համաշխարհային մրցանակի հանձնաժողովի անդամ:

Սահմանադրությանը հաջորդող վեցերորդ տասնամյակը (1970-1980 թթ.) այն ժամանակաշրջանն էր, որի սկզբնական տարիներին արդյունավորվեցին մանկապատանեկան գրականության այգում տնկած բազմաթիվ ծառեր: Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոնը մեծ հաջողություններ էր արձանագրել մանկական գրական ու արվեստի ստեղծագործությունների ոլորտում: Մանկական գրականության ասպարեզում ստեղծագործելը ներկայացվել էր որպես նուրբ, միաժամանակ մասնագիտական ու գիտակից մոտեցում պահանջող արվեստ, և բոլորը, հատկապես կրթված խավը, բացահայտել էր երեխաների կյանքում դրա կարևորությունը: Եվ օրավոր աճում էր մանկական գրականության հեղինակների թիվը: Այս ժամանակահատվածում, բացի մանուկների համար ոտանավորներից ու պատմվածքներից, մանկական պիեսները, ֆիլմերն ու նկարչությունը ևս զգալի զարգացում ապրեցին: Այն համընկնում էր այս հետազոտության հեղինակի մանկության շրջանի հետ, երբ մանկական մտավոր զարգացման կենտրոնում ծանոթացել է արվեստի տեսակներին, ինչպես նաև գրականության աշխարհին: 1970 թ. հիմնադրվեց Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոնի կինեմատոգրաֆիայի ստորաբաժանումը: Աբբաս Քիառոստամին, Նասեր Թաղվային, Ամիր Նադերին, Բահրամ Բեյգային, Ֆարշիդ Մետալային և մանկապատանեկան արվեստի ու գրականության, գեղանկարչության, թատրոնի, կինոյի և մանկապատանեկան գրականության հետ առնչվող այլ ոլորտների կարկառուն դեմքերից շատերն այդ ժամանակաշրջանում աշխատել են այս կենտրոնում:

Պատմվածքների հեղինակ Հուշանգ Մորադի Քերմանին այդ շրջանում ստեղծեց «Մաջիդի պատմվածքները»: Մոսթաֆա Ռահմանդուստը, Մոհամմադնեզա Սարշարը (հայտնի է Ռեզա Ռահգոզար մականունով), Փարվին Դոլաթաբադին, Մոնիրու Ռավանիփուրը, Մանուչեհր Էիթերամին, Ահմադնեզա Ահմադին և ուրիշներ այս ժամանակաշրջանի կարկառուն գրողներից են:

Մանուչեհր Էիթերամին ծնվել է 1942 թ. Թեհրանում: Նա պարսից լեզվի հաջողակ հումորիստներից է, ով մեծ հաջողություն է ունեցել նաև ման-

կապատանեկան գրական ստեղծագործություններում: Նա կատակերգության ժանրով լրջորեն սկսեց զբաղվել 1957 թվականից «Թոֆիդ» ամսագրի հետ՝ միաժամանակ համագործակցելով այլ թերթերի, ինչպես նաև ռադիո-հեռու-տատեսության հետ: Նրա մականունով ստորագրություններից են «Մ. Մորաքրոջ տղա» և «Ա-էս գործի մարդը» տարբերակները: Էիթերամին այդ ստեղծագործությունների մի հավաքածուն տպագրեց «Ջամեոլիեքայաթ» («Հեքիաթների ժողովածու») գրքում և կազմակերպեց նաև իր հումորային պատմվածքների մի հատվածի տպագրությունը «Երեխաներ, ինձ էլ խաղի մեջ ընդունեք» ժողովածուում: Մանուչեիր Էիթերամին իր կենդանության օրոք գրի է տեղի և հրատարակել ավելի քան հիսուն անուն գիրք երեխաների համար, որոնցից կարելի է նշել «Հասանի չէ էի, կարգի՞ն տղա...», «Աքաղաղ չէ էի, իրական ժամացույց...», «Արջն ու մեղրի կարասը» և «Գողն ու ճարպիկ հավը» ստեղծագործությունները:

Նշված շրջանի վերջին տարիները համընկնում են Իրանի մանկապատանեկան գրականության մեջ հիմնական փոփոխությունների հետ: 1978 թ. կործանվեց Մոհամմադեզա Փահլավիի թագավորական իշխանությունը իսլամական հեղափոխության հաղթանակի և Իսլամական Հանրապետության համակարգի ստեղծման արդյունքում: Եվ Իրանի ժամանակակից շրջանի գրողների շարքում նոր սերունդ ի հայտ եկավ:

ДЕТСКАЯ ЛИТЕРАТУРА ВТОРОГО ПОКОЛЕНИЯ СЛЕДУЮЩАЯ ЗА КОНСТИТУЦИЕЙ (1950-1980гг.)

ФИРУЗИМОГАДАМ МАХМУД⁶ (ИРАН)

Статья посвящена изучению детской литературы, после конституционного периода Ирана. Исследование было сфокусировано, в частности, на детской литературе второго поколения после конституции, которая охватывает период 1950-1980 годов.

Ключевые слова – Иран, детская литература, 1950-1980гг.

⁶ Иран, Тербате Гейдарейх, филиал Тербате Гейдарейх Исламского университета Азад, отделение (кафедра) персидского языка и литературы (председатель).

**THE SECOND GENERATION OF CHILDREN'S LITERATURE
FOLLOWING THE CONSTITUTION (1950-1980)**

FIRUZIMOGHADAM MAHMUD⁷ (IRAN)

The article is dedicated to the study of children's literature in post constitutional era of Iran. The object of the study is particularly the second generation of children's literature following the constitutional period, dated from 1950 to 1980.

Key words – Iran, children's literature, 1950-1980 period.

⁷ Iran, Torbathe Heydarieh, Torbathe Heydarieh branch of the Islamic Azad University, Department of Persian language and literature (chair).